Հաշվետվություն

2023 թվականի հունիսի 27-ից 29-ը

Վրաստան, քաղաք Թբիլիսի գործուղման արդյունքների մասին

1. **Անուն ազգանունը.**

   Նարեկ Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ ՊԵԿ ՆԱՎ անվտանգության և պահպանության բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Վրաստան, քաղաք Թբիլիսի 2023 թվականի հունիսի 27-ից 29-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը/աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.**

   Ընդհանուր համաժողովն անց է կացվել «Միջազգային հարկման համակարգի փոխակերպումը և հարկային մարմինները» խորագրի ներքո, որի ընթացքում քննարկվել են IOTA-ի կառավարման հետ կապված վարչական հարցեր և հարկային ոլորտի մասնագիտական թեմաներ:

6. **Քննարկված թեմաները.**

   Ընդհանուր համաժողովի վարչական նստաշրջանի ընթացքում քննարկվել են կազմակերպության գործունեության, ֆինանսական և ներքին աուդիտի 2022թ. հաշվետվությունները, կազմակերպության 2024 թվականի բյուջեն և աշխատանքային ծրագիրը, դիտարկվել են կազմակերպության 2023-2025թթ. ռազմավարության ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքը, ինչպես նաև վերջինիս կատարման մասով

քարտուղարության կողմից ներկայացված առաջարկությունները, կազմակերպությունում Ռուսաստանի և Բելառուսի հարկային մարմինների անդամակցության դադարեցման հարցը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Համաժողովի ընթացքում մասնակիցները հավանություն են տվել կազմակերպության 2022 թվականի գործունեության, ֆինանսական և աուդիտորական հաշվետվություններին: Քննարկման արդյունքներով հաստատվել է նաև IOTA-ի կողմից իրականացվելիք 2024 թվականի միջոցառումների ծրագիրը, որով նախատեսվում է տարվա ընթացքում կազմակերպել լավագույն փորձի բացահայտման և փոխանակման մոտ երկու տասնյակ տարբեր ձևաչափերով դասընթացներ, վեբինարներ, համընդհանուր և տարածաշրջանային կոնֆերանսներ: Գալիք տարվա համար ՀՄՆԿ Գործադիր խորհրդի անդամներ են վերընտրվել Իտալիայի, Լեհաստանի, Լիտվայի, Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի, Պորտուգալիայի, Սլովենիայի և Վրաստանի հարկային մարմինները, իսկ Ավստրիայի հարկային մարմնի ներկայացուցիչը հաստատվել է կազմակերպության աուդիտորական թիմի կազմում՝ երկամյա ժամկետով:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի շրջանակում տեղի են ունեցել «Հարկային մարմիններում ընթացող թվային էվոլյուցիայի ընթացքը և դրա ազդեցությունը միջազգային հարկման համակարգի վրա», «Բլոքչեյն տեխնոլոգիաների և համագործակցային տնտեսության առաջացրած դժվարություններն ու հնարավորությունները միջազգային հարկման համար» և մի շարք այլ արդիական թեմաներով խորհրդակցություններ: Անցկացվել է նաև «Թվային

փոխակերպումը՝ գործնականում» ՀՄՆԿ Տեքէքսպո ցուցահանդեսը, որին ՀՄՆԿ անդամակցող հարկային մարմինները հանդես են եկել թվային ոլորտում իրենց նորարարություններով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Համաժողովին ՀՄՆԿ նախագահությունը պաշտոնապես փոխանցվել է Հունգարիայի հարկային մարմնի ղեկավարին: ՀՄՆԿ հաջորդ տարվա Ընդհանուր համաժողովն անցկացվելու է Հունգարիայում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Նարեկ Խաչատրյան

14.07.2023թ.